



ՏԱՍՆ ԵՒ ՎԵՏԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

ՆԵՐԿԱՅ 1888 ԹԻԻՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մենք ստանում ենք սեփական
ՀԵՌԱԳԻՐՆԵՐԻ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսվանը 6 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրակարգ և Բազմաթիւ փողոցների ան-
կիւնում, Թամանշիկի տանը):
Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հա-
ցեով. ТИФЛИСЪ, Редакция газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՐ ՍՐԾՐՈՒՆԻ

ՏԻԳԻՆ ՈՎՍԱՆՆԱ ՆԱԽԱՐԱՐՈՒՄԵԱՆ ԱՆԱՆԻԿԱՆ, օրիորդ ՆԵԿՏԱՐԻՆԵՆ ԿԱ-
ՐԱՊԵՏԵԱՆ և ՊԵՏՐՈՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԱՆԱՆԻԿԱՆՆԵՐԻ, խորին ցաւով յայտնելով
առաջինը իր ամուսնու և վերջինները իրանց հօր՝ ԿԱՐԱՊԵՏ ՅՈՎԱՆՆԻՍԵԱՆ
ԱՆԱՆԻԿԱՆԻ մահը, խնդրում են իրանց բարեկամներին և ծանօթներին շնորհ
բերել յուզարկաւորութեանը, որը տեղի կունենայ կիրակի օր, մայիսի 1-ին, կա-
թօլիկեան փողոցից, տուն Անդրօնիկովի, № 17, դէպի Ջիզարէնի եկեղեցին, ա-
ռաւօտեան ժամը 10-ին:

1—1

ԲՈՎԱՆՈՒՄԻՆԻՆ

Բաժնի թաղումը.— ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ.
Գնդապետ Ալեքսանդր Մէլք-Հայկազեանի հե-
ռազիրը. Մատենադրութիւն. Ներքին լուրեր.—
ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ. Անգլիական լրագրի ժո-
ղովը և ընտրողական սկզբունքը. Նամակ Թիւր-
քիայից. Արտաքին լուրեր.— ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.— ՀԵ-
ՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻ-
ՐԱԿԱՆ. Պատասխան Գեորգ Եւանգելիսեանին.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Երէկ, 29-ին ապրիլի, կատարվեց Թիֆլի-
սում Բաժնի թաղումը:
Վաղ առաւօտից անընդհատ անձրեւ էր

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆ ԳԵՈՐԳ ԵՒԱՆԻՈՎԵԱՆՏԻՆ

Ձեր նամակը, որ տպված է «Արձագանք» շա-
բաթաթերթի 15 համարում կարդացիք:

Մենք, ձեր փորձառութիւնները աչքի առաջ
ռանկաւով, երբեք չէինք սպասի, որ դու ի
ունենալով, երբեք չէինք սպասի, որ դու ի
բարձր ասպարէզ դուրս գալ. Արեւմտեան գոր-
ծունէութիւնը գովաբանելու և հասարակութեանը
առաջարկելու նրա իրաւունքները բացասող մի
սկզբունք:

Ձեր վերոյիշեալ նամակը բաւական լաւ դասա-
ւորված է. որտեղ հարկաւոր է թէգնազարեանց
քահանային արատաւորել, դուք չէք խնայում ի-
շար դորձ դնել ձեր ընդունակութիւնները, օգտ-
վելով նրա պաշտօնից և այն դիրքից, որի մէջ
գտնվում է յիշեալ հարկաւոր է ընտրողներին բազ-
մաթիւ դիրքեր անուանել, այնպէս որ նրանք չը
կարողանան ձեռնադիմել հաշիւ պահանջել հենց այդ
խօսքի համար, դուք ձեր սովորական ճարտարու-
թեանը այնտեղ էք դրածո՞ւմ այդ բառը, որ
բոլորովին դժուարացնում է ձեր հակառակորդի
դրութիւնը: Իսկ թէ հարկը պահանջում է, որ
նուստացնէ այդ գործի մէջ մասնակցող ան-
ձանց վարկը նրանց անհատաւորի, իսկ ձեզ հա-
ւատարմի ցոյց տալով դէպի սուրբ Էջմիածնի ա-
ւատարմի ցոյց տալով դէպի սուրբ Էջմիածնի ա-
ւատարմի ցոյց տալով դէպի սուրբ Էջմիածնի ա-
ւատարմի ցոյց տալով դէպի սուրբ Էջմիածնի ա-

մաղում, կարծես բնութիւնը ուզում էր
ներգանակել քաղաքիս հայոց հասարա-
կութեան տուրք տրամադրութեան հետ:
Նօվ-Օրբոյսկայա փողոցում (կաթօլիկ
գերեզմանատան կողքին), որտեղ գտնվում
էր Օւստիճի բնակարանը, առաւօտեան 9
ժամից սկսած արդէն անհաշիւ բազմութիւն
թիւն էր հաւաքված: Թեմիս սրբազան ա-
ռաջնորդը և Թիֆլիսի հայոց ամբողջ հօ-
գեւորականութիւնը արդէն 9 ժամին եկել
էին Բաժնի թաղարանը՝ այդ բնակարա-
նից նրան դէպի յաւերժական բնակարա-
նը ուղեկցելու համար:

Բաժնի թաղարանը վրա դրված էին
«Մշակ» խմբագրութեան կողմից առաւ-
տարը և թարմ ծաղիկներից երկու պսակ-
ներ Բաժնի թաղարանի: Մնացած անթիւ

մեան իշխմանը ուղարկած 3,000 ռուբլին:
Դուք և «Արձագանք» խմբագրութիւնը այս
գործի իրողութիւնը այսպէս էք ձևացրել՝ կոթ-
տել էք նրա դուրսը, ձեռքերը, ոտքերը, հանել
լեարդն ու սիրտը, քերթել մորթը, իսկ մնա-
ցածը առաջարկելով հասարակութեանը, մասնա-
ցոյց էք անում նրա վրա ասելով՝ ահա ձեզ իր-
դութիւն... Այդ նրա համար էք անում, որ ան-
ցեալների փորձերից չլացած, հաւատացած էք
որ ամբողջ միայն բացակայութեան է հաւա-
տում, իսկ իրերի ձեռք վերաբնութիւնը շատ ան-
գամ չէ հետազոտում:

Այդ բոլոր քաղաքագործութիւնների պատասխանը
թողնելով նրանց, որոնց սրբազան պարտականու-
թիւնն է ձեռնադիմել հաշիւ պահանջել, մենք դիմում
ենք նամակի այն կէտին, որ վերաբերում է հաշ-
ւատանքի գործունէութեանը:
Դուք ասում էք ընտրվում է հաշուառու մաս-
նաժողով, որ պահանջում է պ. Արեւմտեանից մա-
տենները, որոնք գտնվում էին կոնսիստորիայում:
Այն և մի և նոյն ժամանակ ձայն են հղում, որ պ.
Արեւմտեան մատենները չէ ներկայացնում, լուրեր են
տարածում անկարգ ծախսերի վերաբերութեամբ:
Մենք ոչ թէ ձայն ենք հղել թէ պ. Արեւմտեան
մատենները չէ ներկայացնում, այլ ուղղակի դե-
րաւոր փաստերով հաստատած զեկուցում ենք

տուել ժողովրդին, որ պ. Արեւմտեան մատենները
չէ ուղղում ներկայացնել ի քննութիւն, և պ. Ա-
րեւմտեան եկեղեցու մէջ ժողովրդի և բարեկարգ-
չի առաջ հաստատել է մեր գրածները: Այն
ինչ որ պ. Արեւմտեան ընդունել է, դուք մերժում
էք և բացասում. ասեցէք խնդրեմ, ձեռնադիմել
թիւն հաւատայ ամբողջ՝ Արեւմտեանին, որ դորձող

անհամար պատկերներ յարմարեցրած էին
մասամբ սպակաւոր (կատաֆալիկ), մասամբ
ուրիշ մի կառքի վրա: Ձը նայելով անընդ-
հատ տեղացող անձրեւի, տեսարանը հան-
դիսաւոր էր. ահագին բազմութիւն, որի
գրեթէ կէսը կազմում էին քնքշող սեռի
ներկայացուցիչները, ամբողջ հոգեւորակա-
նութիւնը դադարի առջև, զոյնզոյն, բազ-
մաթիւ գեղեցիկ պատկերի տակ բեռնա-
ւորված երկու սպակաւորները, հանդիսի ամ-
բողջ զնացքի ձանապարհում ի նշան սու-
գի փակված խանութները, այդ բոլորը
տալիս էր յուզարկաւորութեանը մի առան-
ձին հանդիսաւոր բնաւորութիւն:

Յուզարկաւորութեան հանդէսը Նօվ-Օր-
բոյսկայա փողոցից անցաւ Նազուրայա փո-
ղոցը, նայուհետեւ Սօլոյակայա փողոցը և
Երևանեան հրապարակը, յետոյ Գլօցօվա-
յա փողոցը, Գլօցօվսկի պրոսպեկտը, ի-
ջաւ Բարխատիսկայա փողոցը և «Լօնդոնի»
հիւրանոցի առջև անցնելով, մտաւ այն
նեղ փողոցը, որ տանում է դէպի Վանքի
մայր-եկեղեցին: Բազմութիւնը այնքան շատ
էր, որ բոլորս չը կարողացանք տեղաւոր-
վել եկեղեցու մէջ և Բաժնի թաղարանի
մէջ մտնող մնացյալ եկեղեցու բակում:

Եկեղեցում առաջ-բաժնիայ Տէր-Ստեփան
Տէր-Ստեփանեանց մի սրտաշարժ քարոզ
խօսեց, որի մէջ նկարագրեց հանգուցեալի
բնաւորութիւնը, օգտվելով «Մշակ» ան-
ցեալ համարի բանտարեալների մէջ մեր
յայտած մտքերից Բաժնի թաղարան-
թեան և նրա գործունէութեան մասին:
Այնուհետեւ Վանքի մայր-եկեղեցու բա-
նում լսեց: Այնպէս լսեց: Այնպէս լսեց: Այնպէս լսեց:
մի ոտանաւոր, և տիկին Մամիկոնեան-Պրա-
նեան խօսեց հայ կանանց կողմից:

Մինչև գերեզմանոց հասնելը, Հաւաքա-
րի կամուրջը անցնելուն պէս, հասարա-
կութեան աչքերին բացվեց հետեւեալ տե-
ւաւանը. բազմութիւնը իրանց դուքանների
ամբողջ շարքը փակել էին և փողոցի մի
կողմից դէպի միւս կողմը կախ էին արել
ծաղիկների և տուրների պսակներ, որոնք
կազմում էին հանգուցեալի անուան սկզբ-

անձ է եղել, թէ ձեզ, որ ոչ ժողովի մէջ էք գտն-
վել, ոչ երեցիկութան էք եղել, ոչ ծխական, և ոչ
հաշուառու:

Բայց աւելի դարմանալին այն է, որ դուք այդ
դիրքում գտնվելով, դուք որ եկեղեցին ինչ եկա-
ւուտ ունի և որպէս մայր դուք, իսկ ծխա-
կանները, որոնք կան երբ հարկաւոր էր Արեւմտե-
անի երեցիկութեանը, և չը կան, ձեր ասելով
երբ հարկաւոր է Արեւմտեանից հաշիւ պահանջել,
ամբողջ վեց տարի է չը գիտեն թէ իրանց եկե-
ղեցին ինչ արդիւնք ունի:

Ասում էք, որ լուրեր են տարածել (հաշուառու-
ները) անկարգ ծախսերի վերաբերութեամբ և ծա-
նութեան մէջ մատնանիլ էք անում Էջմիածնի
ուղարկած 3,000 ռուբլին: Մենք այդպիսի լուրեր
չէինք կարող տարածել, ըստ որում հաշիւ դեռ
չէինք տեսել, ուստի դժուար էր իմանալ թէ
ծախսերից որն է կանոնաւոր և որը անկարգ:
Իսկ ժողովրդին մէջ, կարող ենք ասել, շատ բան
էին խօսում. մէկը ասում էր թէ պ. Արեւմտեան
առանձնապիւրներ է ունեցել եկեղեցու հաշիւ մեծ
ուճիւղով, միւսն ասում էր թէ մի խոշոր գումար-
ի պարտավորակ է մտել եկեղեցական սուղու-
կի մէջ և այն և այլն, բայց մենք այդ տեսակ
խօսակցութեան հաւատ չէինք ընծայում, ուր մը-
նաց որ լուրեր տարածէին: Մեր նպատակն էր
քննելուց յետոյ ներկայացնել ժողովրդին ման-
րամասն հաշիւ, բայց պ. Արեւմտեան իրան պար-
տաւոր չէր համարում հաշիւառութեանը մեղ յանձ-
նելու, ասելով որ նրա հաշիւները մինչև 1888
թիւը աւարտած է համարում:

Ինչպէս դուք, նոյնպէս և «Արձագանք» խմբ-
ագիրը խաւաքում էք հարցին պատասխանելուց,

նական տառեր կրող գեղեցիկ կամարներ:
Փողոցում դրված էին սպիտակ ծածկոցներով
սեղաններ, որոնց վրա դրված էին վառած
մոմեր և խուռն էր ծխում:

Գերեզմանոցում բաց գերեզմանի վրա
ծաղիկներից կամար էր շինված, որի վրա
դրված էին Բաժնի թաղարանի անուն-
ները և որի տակ կանգնեցին բոլոր պատ-
գամաւորները իրանց պատկերները ձեռքին:
Պատկերի թիւը հասնում էր ութսուհին:

Այդտեղ ձառեր խօսեցին պ. պ. Խ. Մա-
րտիան հայ արհեստաւորների և բանաւոր-
ների կողմից, Եղաբեան Պետրեւորդի հայ
ուսանողների կողմից, Սարգիս Նազարեանց
հայ գրաշարների կողմից, այլ և երկու
ձառ կարգացվեց զործակատարների կողմից:
Պէտք է խոստովանվի, որ թաղման կար-
գադրիչ յանձնաժողովը շատ լաւ էր կար-
գադրել յուզարկաւորութեան ամբողջ հան-
դէսը: Պարոնները ցոյց տուցին գործի հաս-
կացողութիւն և մեծ եռանդ:

Թաղման հանդէսը վերջացաւ մօտաւո-
րապէս 4 ժամին կէսօրից յետոյ, և բազ-
մութիւն հանդիսականները կատարելով ի-
րանց վերջին պարտը և վերջին մնաց
բարև ասելով Բաժնի թաղին, ցրվեցան իրանց
անբը այն տիւտը գիտակցութեամբ, որ
Բաժնի այլ ևս չը կայ:

Գ. Ա.

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԳՆԴԱՊԵՏ ԱԼԵԿՍԱՆԴՐ ՄԵԼԻԿ-ՀԱՅԿԱԶԵԱՆԻ
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Մենք ստացանք այս օրերս բաւական թուով հե-
ռագիրներ, որոնք ցաւակցութիւն են յայտնում
Բաժնի թաղարանի մասին: Այս բոլոր հեռագիրնե-
րը մենք յանձնեցինք մեր հանգուցեալ հեղինակի
թաղման համար կազմված յանձնաժողովին:

Բայց այդ հեռագիրներից մէկը, այն է պ. Ա-
լեքսանդր Մէլք-Հայկազեանի հեռագիրը, փոթից,
այնքան նշանաւոր է, որ մենք պարտաւոր ենք
համարում նրա բովանդակութիւնը այստեղ յայտ-
նել:

Թէ պ. Ալեքսանդր մեր եկեղեցական կանոնների և
աւանդութիւնների համաձայն պարտաւոր է հա-
շիւ տալ իր ընտրած ժողովրդին թէ ոչ: Դուք
միայն կրկնում և երեքնում էք, որ պ. Ալե-
քսանդր ազնիւ մարդ է... Նրա ազնիւ լինելը ոչ
ոչ է ուրանում և հենց հասարակութեանը զար-
մանքը նրանումն է, որ նա կարծելով որ Ալե-
քսանդր ազնիւ մարդ է, ընտրել է նրան երեցիկու-
թեան, բայց այդ ազնիւ մարդը խոյս է տալիս
հաշիւ ներկայացնելուց իր ընտրած ժողովրդին:

Միթէ դուք և «Արձագանք» խմբագիրը ան-
ազնիւ էք, որ ձեռնադիմելով լինելով փոխադարձ
վարկի հաստատութեան խորհրդի նախագահ, իսկ
միւսը կարգավար, այնու ամենայնիւ, երբեք չէք
մտածում վաճառ հաշիւ ներկայացնելու ընկերու-
թեան իւրաքանչիւր տարի, իսկ պ. Ալեքսանդր ամ-
բողջ վեց տարի է հաշիւ չէ տուել իր ընտրողնե-
րին, իսկ երբ վերջիններս հաշիւ են պահանջում,
Ալեքսանդր իրան պարտաւոր չէ համարում հա-
շիւ տալ: Դուք և «Արձագանք» խմբագիրը ժողո-
վրդին, ցնդել հետ հաւատարեւով, բացականցում
էք՝ միթէ ազնիւ մարդուց հաշիւ կը պահանջեն.

կեցցէ լօգիկաւ:
Դուք շարունակում էք՝ արդեօք ճշմարիտ է, որ
Ալեքսանդր մատենները չէ ներկայացնում: Հարց-
նում ենք պ. Ալեքսանդրին և նա պատասխա-
նում է թէ նրա մատենները ամենայն տարի
քննվել են առաջնորդական յանձնարարութեանց
մասնաժողովի ձեռքով և այլն:

Որպէս զի ապացուցանեց, որ Ալեքսանդր ձեռ-
այդ չէր կարող ասել և եթէ ասած էլ լինի, ու-
րեմն ուղիղ չէ ասել, մենք բերում ենք այստեղ
արձանագրութիւնը:

Գնդապետ Մելք-Հայկազեան, որ Բաֆֆիի կեսանքի ժամանակն էլ մեծ դուռնար էր տուել նրա մի հեղինակութիւնը հրատարակելու համար,—այժմ յայտնում է մեր անունով ուղղված իր հեռագրում, որ յանձն է առնում Բաֆֆիի որդեկերանցից մէկին իր հաշուով ուսում տալու:

Այդ տեսակ գիտակցական բարի դործ պ. Մելք-Հայկազեանի կողմից մի նշանաւոր երեւոյթ է մեր հասարակական կեանքում:

Գ. Ա.

ՄԱՏՆՆԱԳՈՒԹԻՒՆ

Այս օրերս Պետերբուրգում դուռն եկան մամուլի տակից ժողովրդական գրքերի հրատարակութեան 8-րդ և 9-րդ տետրերը—«Վերջին-Դաս» և «Յրինի» անուններով: Առաջին. գրքովը բաղկացած է 12 երեսից և արժէ 2 կոպէկ, իսկ միւսը, «Յրինի», 61 երեսից և արժէ 5 կոպէ: «Վերջին-Դասը» նկարագրում է վերջին Ֆրանս-պրուսական պատերազմի էպոսայից էլզասցիների կեանքից վերջրած մի փոքրիկ տեսարան, երբ գերմանացիների բռնութիւնները դուռն էին կանչել Ֆրանսիացիներին մէջ հայրենասիրական զբաղմունքներ և հայրենասիրական վարմունքներ: Եւ «Վերջին-Դասը» ներկայացնում է այդ յուզման, կասկած, օտարութիւն, հայրենասիրական զգացմունքներ մի օրինակը վիպասանական թաղանթի տակ: Մանաւանդ սիրուն է մէջը իր դիպրուստական կողմով. դուռնը կարգաւոր ձեռք վրա ներդրածում է ոչ այնքան նրա տենդենցիական կողմը, որքան նրա էսթետիկան, դեղարուստական շնչը:

Ինչ վերաբերում է միւսին, «Յրինի», նա նոյնպէս, պիտի ասել, խիտ զբաղեցնող և հետաքրքիր բովանդակութիւն ունի: Գրքովի մէջ կատարվող անցքը վերաբերում է XVI-երորդ դարուն, այն ժամանակներին, երբ «ամբողջ Եւրոպան դուռն էր թուրքերի առաջ»: Իր Մեհմեդ-մեհմեդի և Սելէյմանի օրերով: «Յրինի», ունեւորական Սիզիւ բերդի հրամանատարը, վրձնում է մինչև վերջին շունչը պաշտպանել բերդը թուրքերի յարձակումներից, մինչև ժամանակ կը տայ գերմանական կառավարութեանը կազմակերպել իր զօրքերը: Իր այդ հերոսական պաշտպանութեանը մասին խիտ խորապէս նկրտվ և բոլոր սիրողներով, բայց մի և նոյն ժամանակը, նրան աջակցում է նշանաւոր կերպով կոտորել իր թշնամու, Սելէյմանի անյաղթ պատերազմական ոյժը:

Մեր ուշագրութիւնը աւելի դրանց այդ զբաղմունքի մէջ այն գեղեցիկ և կանոնաւոր լեզուն, որով թարգմանված են այդ գրքերը: Մեր թարգմանութիւնների մէջ մեզ շատ քիչ է աջակցել:

ԱՐՃԱՆԱԳՐԱԿԱՆ

«1888 թիւ ապրիլի 10-ին Տափի-Թաղի սուրբ Գէորգ եկեղեցւոյ ծխականները, հրաւիրված լինելով այսօր եկեղեցին, ս. պատարագից յետոյ ժամ 12-ին ցերեկվայ, ընդ նախագահութեամբ բարեկարգիչ Թովհաննէս քահանայ Մարտիրոսեանցի, ժողովեցան եկեղեցւոյ մէջ ընդամենն ըստ և մէկ ծխականներ 23 ձայնի իրաւունքով: Հրաւիրված էին քառասուն անձինք. ժողովը ընդունվեցաւ կայացած և աստիճանով ընտրվեց Ալէքսանդր Մէլք-Փաշայեանց: Բացի ծխականներից եկած էին այստեղ պ. պ. Կապիթ խառնուս, Համազասպ Արսլան և Ֆէօդոր Եւսեբեան, որոնք իբրև ժամաւորներ խնդրեցին թող տալ մասնակցել ընտրութեան, բայց ժողովը աչքի առաջ ունենալով, որ վերոյիշեալ պարոնները Տափի-Թաղի ս. Գէորգ եկեղեցւոյ ծխականներ չեն, մերժեց ներանց խնդրը կանոնագրութեան համաձայն:

«Գրանից յետոյ բացատրվեց, որ այս օր վաղժ-ժովը դուռնարված է հաշտեանների պահանջմամբ և նրանցից մէկը կարգաց գրաւոր գեկուցումն հաշտեանների կողմից: Ժողովը լսելով պ. Աբիմեանի բացատրութիւնը, որը հաստատեց հաշտեանների գեկուցման հաւաստի լինելը, յարակցելով որ հաշտեանեանները յետ է ստացել կոնսիստորիայից մասնաւոր կերպիւ հաշտեաններ ընտրելուց յետոյ և Վեհափառ Կաթողիկոսի պահանջման համաձայն, առաջադրել է հաշտեաններ Նորին Վեհափառութեան, իսկ մասնաւորները, այստեղ են և նա կը յանձնէ կրկին կոնսիստորիային, որտեղից հաշտեանները կարող են ստանալ քննելու համար:

«Պարզվեց նոյնպէս որ 1886 և 1887 թվական-

հանդիպելու այդ տեսակ հարթ, կոկ և մաքուր գրականական լեզուի: Գրաւորների մէջ դուռն կը նկատուի, ինչպիսի մեծ ուշագրութեամբ հետեւին գրքերի հրատարակողները այն բոլոր բարեփոխութիւններին, որոնց իր զարգացման մէջ ներկայացնում է մեր ներկայ գրականական լեզուն: Իսկ այդ հանդամանքին՝ բոլորովին սխալ լի լինի, չնչին նշանակութիւնն տալ: Գործնական փորձից մենք գիտենք, որ գրքերի տարածման աստիճանը—նրանց բովանդակութիւնից անկախ—գտնվում է ուղղակի առնչութեան հետ գրաւորների ոճի թեթեւութիւնից և նրանց գրգռելութիւնից: Միւս կողմից,—պիտի ուշագրութիւն դարձնել այս հանգամանքին,—գրքերը, մասնաւորապէս գրքերը, որոնք նշանակվում են ժողովրդի մէջ տարածելու համար, պիտի ունենան կանոնաւոր և կարելիին-չափ կով, մշակված լեզու, որովհետեւ գրքերը—ինչ տեսակ և չը լինեն նրանք—ազդում են ժողովրդի և լեզուի կանոնաւորութեան վրա: Գրքերը երկայնի դեր են կատարում, ցրելով մի կողմից՝ մտքեր, միւս կողմից՝ կրթելով, սխտեմաւորելով և համամասն դարձնելով ժողովրդի գանազան բարեաւելքը: Եւ հէնց այդ պատճառով հրատարակող պարոնների այդպիսի խնամաւոր ուշագրութիւնը դէպի լեզուի կրթութիւնը՝ արժանի է մեր խրախուսական համակրանքին:

Ցանկանալով գրքերի հրատարակողներին շարունակել այդպիսով իրանց համակրանքի արժանի առաջադիմութիւնը գրքերի թէ ներքին բովանդակութեան և թէ արտաքին արժանաւորութիւնների մէջ, մեզ մնում է միայն յանձնարարել նրանց ընթերցողի բարի ուշագրութեանը, և ցանկանալ բացի դրանից, որ ընթերցող հասարակութիւնը խրախուսի այդ բարի դիտաւորութեան իրագործմանը—ժողովրդական դրադարանի հաստատակարարութեան պայմաններին և նրա զարգացմանը:

Միմիայն այն գործը կարող է աճել և զարգանալ մի հասարակութեան մէջ, որը օգտվում է փոխադարձ համակրութեամբ և փոխադարձ օժանդակութեամբ: Ժողովրդական դրադարանի գործը բարի գործ է և արժանի է ամեն տեսակ քաջալերութեան, մասնաւորապէս զբաղված է այնպիսի համակրանքի հետ: Ինչպէս որ Կաթողիկոսի կարելի է ասենք Պետերբուրգի գրքերի հրատարակչական գործունեութեան մէջ:

Ա. Գ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լսում ենք, որ հանգուցեալ Բաֆֆի թողել է բաւական անտիպ աշխատութիւններ, որոնց մեծ մասը վիպական գրաւորներ են: Դոյանից նշա-

ների մատենաները պ. Աբիմեանց յանձնել է տէր Սահակ Սահակեանցին լրբել անդամի առաջնորդական մասնաժողովի, երբ արդէն յիշեալ հաշտեանները ընտրված էին: Հանդիսականներից մի քանի անձինք արին հետեւել նկատողութիւնը. 1) նախընթաց ժողովում երեցիութիւն և հոգաբարձուների ընտրութիւնը յետաձգվեց այն պատճառով, որ նախ և առաջ ընդվին պ. Աբիմեանի հաշտեանը և այնուհետև ձեռնարկին ընտրութեան և պ. Աբիմեան, ներկայ գտնվելով ժողովում, չը յայտնեց որ նա մատենաները չի յանձնի հաշտեաններին իրան ազատ համարելով հաշտեանութիւնից և 2) հաշտեանութեան իրաւունքը պատկանում է բացառապէս ծխականներին, իսկ կոնսիստորիան և առհասարակ հոգեւոր իշխանութիւնը պէտք միայն հսկեն որ հաշտեանութիւնները կատարվեն ճշգրտութեամբ և կանոնաւոր կերպով, վասնորոյ ժողովը, ի նկատի առնելով որ պ. Աբիմեանց պարտաւոր է հաշիւ տալ իր ընտրող ծխականներին սկսեալ այն օրից, որ նա յանձն է առել և բեցփոխանական պաշտօնը, վճռեց՝ խնդրել բարեկարգիչ տէր-Թովհաննէս հօր, անյապաղ ստանալ բոլոր հաշադրերը պ. Աբիմեանցի ամբողջ երեցիութեանական պաշտօնավարութեան ժամանակամիջոցի և յանձնել հաշտեաններին քննելու:

«Մրանից յետոյ ժողովը որոշեց՝ այսօր և իսկ ընտրել թէ նոր երեցիութեան և թէ հոգաբարձուք և ընտրողները միաձայն խնդրեցին պ. Բալաբէր Գառապարեան Մէլք-Վարագեօղեանցին ստանձնել երեցիութեան պաշտօն: Հանդիսականներից մէկը ցանկացաւ, որ այդ ընտրողութիւնը լինի դադարի ընդհատմամբ: Մինչև ընտրութեան

նաւորն է «Մարի» անունով վէպը, որ վերջրած է պարսկահայերի կեանքից և երկու ուրիշ վէպեր որոնց նիւթը առնված է Թիֆլիսի հայերի կեանքից: Ասում են որ կայ և մի ուրիշ վէպ, որը վերջրած է վաճառականների կեանքից և կրում է «Վաճառականներ» վերնադիրը: Վերջապէս հանգուցեալը դեռ իր կենդանութեան ժամանակ յայտնել է, որ ունի «Փաթոններ» վերնադիրով մի վէպ՝ հայ ուսանողների կեանքից վերջրած:

Թիֆլիսում լոյս տեսաւ Պերճ Պաշեանի «Սոս և Վարդիթեր» վէպը: Այդ վէպը, որի առաջին տպագրութիւնը եղել է 1860 թվականին, արդէն բաւական ծանօթ է ընթերցող հասարակութեան, և այդ պատճառով աւելորդ ենք համարում մանրամասնաբար խօսել այդ գրքի երկրորդ տպագրութեան առիթով: Այսպէս միայն հարկ ենք համարում յայտնել, որ գրքի տպագրութիւնը բաւական մաքուր է, բարկացած է 334 մեծադիր երեսներից և արժէ 1 ռ. 50 կ:

Մեզ գրում են հետեւեալ ԲԱԳՈՒԹՅ. «Երեսփոխանական հարցը օրական հետաքրքիր հարցերից մէկն է դարձել ոչ թէ միայն Թիֆլիսում, այլ և այստեղ: Այստեղի հայոց եկեղեցւոյ երեցիութիւնը հարցը դեռ հրապարակի վրա է. նրա երկար տարւայ երեցիութեանական գործունեութեան մեծ կէտերը, նրա հաշիւների մէջ նկատված թերութիւնները և անորոշութիւնները մինչև այժմ էլ չեն պարզված, չը նայելով որ այդ նպատակի համար մինչև անգամ մի առանձին յանձնաժողով էլ կազմվեց: Այժմ այդ հարցի լուծման համար այստեղ է եկել թեմական առաջնորդ Սմբատեան եպիսկոպոսը, որը ժողով պէտք է ասեն և վերջ տայ խառնակութիւններին: Թէ ինչ հետեանքի կը համար առաջնորդը, այդ դժուար չէ գուշակել, քանի որ նա այստեղ գալով իշխանել է նոյն իսկ այն Մէլքեանի տանը, որի զեղծումները պէտք է քննել, և գտնվում է միանշանակ նրա կուսակցութեան շրջանում: Այդ քայլը ամեն անհայտ խօսակցութիւններին նիւթ է դարձել:

Մեզ գրում են հետեւեալ ԲԱԳՈՒԹՅ. «Մարգարեական ընկերութեան նոր բաւոտի հետեւ հարցը իր վախճանին հասած կարելի է համարել, թէ և փոքր ուշ, որովհետև այն շինութիւնը որի մէջ այժմ է դեռնողված ընկերութեան երկսեռ դպրոցը, ոչ թէ միայն չէ համապատասխանում դպրոցական առողջապահութեան պայմաններին, այլ և ամեն կողմից մի այնպիսի ողորմելի փրճակի մէջ է գտնվում, որ մարդ դժուարաւ համար կարող է գտնուի և ամբողջում մի անաղին քաղաքի հարուստ ազգաբնակչեան

ձեռնարկելը պ. Մէլք-Վարագեօղեանց խնդրեց ժողովականներից կրկնել և արձանագրել մեր այն հին և բոլորին յայտնի կանոնները և առաջնորդութիւնը, որ եկեղեցւոյ երեսփոխանի ներկայացվին իւրաքանչիւր տարի և որ երեցիութեան բացի սովորական ընթացիկ ծախսերից իրաւունք չունենայ ուրիշ ծախսեր անել, առանց ժողովրդի գիտութեան: Ժողովը ընդունեց այդ առաջարկութիւնը: Այնուհետև եղաւ դադարի ընդհատման այս եղանակաւ՝ իւրաքանչիւր ծխական իր ընտրելի անձի անունը գաղտնի գրելով թղթի վրա, յանձնեց բարեկարգիչ հօր, որը բոլոր թղթերը ժողովուրդ յետոյ բարձրաձայն կարդաց: Հետեանք և կաւ այն, որ պ. Մէլք-Վարագեօղեանց միաձայն ընտրվեցաւ երեցիութեան:

«Առաջարկվեցան գաղտնի ընտրելութեամբ վերոյիշեալ եղանակով Հաւաքարի ուսումնարանի համար ընտրել չորս հոգաբարձուք և երկու կանգնողներ (փոխ-հոգաբարձուք). ընտրվեցան տասն և ինն անձինք և հետեանք եղաւ այսպէս պ. պ. 1) Բալաբէր Մէլք-Վարագեօղեանց 16 ձայն, 2) Կարապետ աղա Մուրթաֆեան 15 ձայն, 3) Բաղդասար Արմիւնց 14 ձայն, 4) Թովհաննէս Մարտիրոսեան 13 ձայն, 5) Երկաշափ կիւրակոսեան 10 ձայն և 6) Ալէքսանդր Մէլք-Աղաբեանց 6 ձայն:

«Ժողովը, համաձայն ընտրութեան, ընդունեց առաջին չորս անձանց հոգաբարձուք, իսկ վերջին երկու անձանց փոխ հոգաբարձուք և ընտրողական թերթերը ստորագրելուց յետոյ արժանապատիւ նախագահ յայտնեց ժողովը զոյգված, որ արդէն ժամ 2 և 45 րոպէ էր ցերեկվայ:

Այս ամենից պարզ երևում է 1) որ մատեն-

դաւանները, և թէ այնքան անտարբերութեամբ կարող է վերաբերվել մի հասարակութիւն դէպի իր դպրոցական գործը: Մարգարեական ընկերութեան խորհուրդը նոր շինութեան համար վճռել է ծախսել մինչև 40 հազար րուբլի, որից մօտ 35 հազար կանխիկ կայ այս րոպէիս: Գարոցի շինութեան յատակագիծը կազմված է շատ լաւ և պէտք է սպասել, որ նոր շինութիւնը կը լինի քաղաքի փառաւոր շինութիւններից մէկը: Մի քանի օրից յետոյ շինութեան գործը պէտք է ստորագրվի: Շինութիւնը առաջիկայ ուսումնական տարւայ համար պատրաստ չի լինի, այլ պատրաստ կը լինի միւս ուսումնական տարւայ համար, այնպէս որ մի տարի ևս դպրոցը դժբաղդութիւն պէտք է ունենայ զետեղելու այժմեան շինութեան մէջ: Անկասկած ընկերութեան վարչութիւնը չի մոռանալ, որ նոր շինութեան սկսելու հետ միասին պէտք է դէժ փոքրիկ նորոգութեան ենթարկել այժմեան շինութիւնը, որի մի քանի մասերը այնքան քարուքանդ են եղած, որ դժուար կարող են մի տարի գիմանալ, առանց նոյն իսկ մի անսպասելի վտանգի ենթարկելու այդ սենեակների մէջ գտնվողներին:

ՍՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԼՕՐԴԵՐԻ ԺՈՂՈՎԸ ԵՒ ԸՆՏՐՈՒԱԿԱՆ ՍԿՋՈՒՆԻՐԸ

Իր սահմանադրական կազմակերպութեան հետ Մեծ-Բրիտանիան ունի հիմնարկութիւններ, որոնք հաստատված են դիտարկապէս աւանդական հիմունքների վրա, և որոնք իսկապէս աւելի քան պահպանողական բնաւորութիւն ունեն, և խախտում են ազատ ընտրութիւն և նրա սկզբունքները: Այսպիսի հիմնարկութիւններից է անգլիական լորդերի ժողովը, որը իսկապէս արիստոկրատական մի ժողով է, և որտեղ ազատ ընտրութեան տեղ գործում է ժառանգական իրաւունքը, և այդպիսով լորդերի ժողովի անդամները, որոնք առաջին դեր են կատարում, փոխանակ ընտրվելու ժողովրդի ներկայացուցիչներից, բաղմում են այդ ժողովում միմիայն իրանց ժառանգական ընտրութեան իրաւունքը: Նոր լորդեր, որ անգամ է, մեռնում է նրա տեղը բռնում է նրա որդին, եթէ մինչև անգամ նա լինի անպայման անարժան, անընդունակ և մեռաւաղար:

Այդ հին, վեհաւար և անաւանելի սխալեմայի դէմ վաղուց արդէն կուտում է անգլիական ազատամիտ կուսակցութիւնը, և նոյն իսկ համայնքների ժողովը ինքն շատ անգամ այն միտքն է յայտնել, թէ պէտք է փոխել այդ սխալեմայն լորդերի ժողովի անդամներին ազատ ընտրութեան

ները գտնվել են ոչ թէ էջմիածնում, այլ Թիֆլիսում, ուստի և հարկ չը կար պ. Աբիմեանին հաշտագրով պահանջել մատենաները:

2) Պ. Աբիմեան մատենաները յետ է ստացել կոնսիստորիայից, մասնաւոր կերպով, հաշտեաններ ընտրելուց յետոյ:

3) 1886 և 1887 թվ. մատենաները պ. Աբիմեան յանձնել է տէր-Սահակ Սահակեանցին հաշտեաններ ընտրելուց յետոյ:

4) Եկեղեցին առաջուց ծխականներ ունեցել է, որոնք ընտրել են պ. Աբիմեանին երեցիութեան և այժմ նրանց թիւը աւելացել է և նրանք ընտրել են հաշտեաններ, բայց պ. Աբիմեան դրանից յետոյ մատենաները (1886 և 1887 թվ.) յանձնել է տէր-Սահակ Սահակեանցին և ոչ հաշտեան մասնաժողովին:

5) Առաջնորդական մասնաժողովը չէր կարող վաւերացնել 1886 և 1887 թվ. մատենաները, ըստ որում այդ տարիների մատենաները հաշտեան մասնաժողով ընտրելուց դեռ չեն եղել քննված:

6) Բոլոր տարւայ մատենաները հաշտեաններ ընտրելուց յետոյ գտնվել են Թիֆլիսում, իսկ նոր երեցիութեան ընտրելուց յետոյ մաքնիսական դուրսութեամբ թեւեւ են էջմիածին:

Եւ 7) Արքեօք մեր երեցիութեանները պարտաւոր են հաշիւ տալ իրան ընտրող ժողովրդին և վերջինս իրաւունք ունի հաշիւ պահանջել առաջիններից թէ ոչ: Ահա հարց, որ հարկաւոր է պատասխանել, իսկ ազնիւ բաւող լեզուի փաթաթ շինելով այս հարցերին չէ պատասխանում:

Ա. Մէլք-Փաշայեանց

սկզբունքներ կողմնակիցներ թիւը օրից օր շատանում է, և այսօր Անդրկովկասում մեծ է այն կուսակցութիւնը, որը պահանջում է ոչնչացնել ժառանգական իրաւունքները և դրա տեղ ընդունել անհատական իրաւունքները: Կառավարութիւնը շատ անգամ ընդդիմացել է այդ պահանջին, յայտնելով որ այդպիսի սխառնակ ընդունելը միանգամայն կը խախտէ լորդերի ժողովի հիմքերը: Բայց դադարեցրել փոքր առ փոքր հաստատանքով արդէն անխուսափելի է դարձել, և այդ պատճառով կառավարութիւնը այժմ արդէն մի քայլ է արել զէպի այդ համակրելի սկզբունքները գործադրութիւնը: Եւ լորդ Սալթըբի յայտնեց լորդերի ժողովի վերջին նիստերից մէկում, որ ինքը շուտով պէտք է ներկայացնէ մի նախագիծ, պահանջելով մի քանի փոփոխութիւններ մտցնել լորդերի ժողովի պատկան կազմակերպութեան մէջ: Այդ փոփոխութիւններն զիտաւոր կէտը այն կը լինի, որ կընտրվին միջին իրանց մասը ժողովի անդամներ այնպիսի անձինք, որոնք մի աչքի ընկնող ծառայութիւն են արել երկրին, կամ յայտնի են իրանց արտասովոր մտաւոր ընդունակութիւններով: Այդպիսով ուրեմն, այդ նախագիծը չորսով, լորդերի ժողովում կը բազման ոչ թէ միայն այնպիսի անձինք, որոնք, որոնք այդ դերը ստանում են իրանց ծառայման միջոց, ժառանգաբար, այլ բոլորովին աշխատողներն են, որոնց համար վարդաց արդէն աշխատում են այդ սկզբունքների ջերմ կողմնակիցները:

ՆԱԽԱԿ ԹԻՒՌԻՒՄՈՒՅԹ

Կ. Պոլիս, 18 ապրիլի

Այս առաւոր «Արեւել» կը հաղորդէ թէ նախարարաց խորհուրդը իւր վերջի նստին մէջ ի նկատ առնելով Գաղութիւն Պատրիարքի հրաժարական և Պոլսոյ պատրիարքութիւնէն, ընդունել է այդ հրաժարականն և վաւերացուցել է նորա ընտրութիւնն իւր Պատրիարք Երուսաղէմի Նախարարաց խորհուրդն իւր այս որոշումներն յատուկ տեղեկագրով մատուցել է կայսեր:

Յակայն կայսրն ինչ պիտի ընէ: Այդ մասին թէպէտ որոշ բան մը չը դիտարկուի, սակայն ինչ որ կըսուի քիչ թէ շատ վստահելի աղբիւրներէ, ասանցմէ կարելի է անկաշեղել, որ կայսրը չը պիտի ընդունի Գաղութիւն Պատրիարքի հրաժարականը: Բայց երկարագործիւն մ'է այս և շատ հաւանական ենթադրութիւն մը, բայց ոչ ստուգութիւն մը:

«Արձադրանք» չարախախտութիւն 12-ի թւոյն մէջ Պոլսէն հրատարակեալ թղթակցութեան մը առթիւ մի քանի խօսք ըսել հարկ է թելադրել իմ սովորութիւնս չէ ուրիշներու գործերուն խառնուելու: Ուրիշներու դրած թղթակցութեանց մասին կարծիքներ յայտնել, բայց որովհետեւ այդ թղթակցութեան ներքեւ խմբագրական ծանօթութիւն մը կայ Արիստակէս սրբազանի մասին, Զէյթունի հրկիզելոց մասնաժողովն ալ օգտակար կը համարի այդ խնդրոյ առթիւ բացատրութիւն մը:

«Արձադրանք» մէջ գրուած է թէ Պէլիճիկի կողմէն սովորելով և Պոլսէն օգնութիւններն յապաղելով միջանի անձինք դիմած են Սովետոյ Գանձնաժողովին, որ գտնէ ռուսահայոց նուիրեալ դրամէն օգնեն զոցա, յայտնելով թէ ռուսահայոց համար խորհրդիւն չը կայ այս կամ այն հասարակութեան մէջ, երբ անոնցմէ մին կըստեան վտանգին հետեւեալ կը դառնա: Սակայն Սովետոյ Գանձնաժողովը մերժած է, պատասխանելով իւր թէ, Թիֆլիսի առաջնորդ Արիստակէս եպիսկոպոսը դրած է իրեն, որպէս զի Ռուսիայէն հանգանակուած դրամը պէտք է գործածել Զէյթունի հրկիզելու և Երուսաղէմի և Գաղութիւն համար: Եւ իսկ «Արձադրանք» խմբագրութիւնը այս լրոյն ներքեւ կաւեցնէ իւր ծանօթութիւն: «Զինք հաւատում, որ սրբազան Արիստակէս եպիսկոպոսը իւր կողմից անմիջապէս մի այսպիսի պատուէր տուած լինի ամբողջ ռուսահայերի անունով: Խմբագրութիւն իրաւունք ունի ընել այս գիտաբարութիւն վաճառելի այդպիսի բան մը չը կայ: Այն իրողութիւնն:

Նախ պէտք է գիտնալ թէ Սովետոյ Գանձնաժո-

ղով չը կայ, «Զէյթունի հրկիզելոց յանձնաժողով» անվան ժողով կայ, որ բոլորովին տարբեր բան է: Սովետոյ Գանձնաժողովը մը երբ դրամ կը հաւաքէ ամեն գաւառի հայոց համար կըլլայ, իսկ երբ «Զէյթունի հրկիզելոց յանձնաժողով» կըսուի անմիջապէս կը հասկցուի, որ Գանձնաժողովը մասնաւոր գաւառի մը համար միմիայն ստակ կը հաւաքէ և յանուն այդ գաւառին հաւաքած ստակը կարող է գործածել ուրիշ նպատակի: Զէյթունի հրկիզելոց Գանձնաժողովը ամեն կողմ դիմած է և ստակ հաւաքած է միայն և միմիայն Զէյթունի համար, հետեւեալ ինք պարտաւոր է այդ ստակը միայն Զէյթունի համար գործածել: Իսկ եթէ ստակ աւելնայ, այն ատեն այդ ստակը կը խրկուի: Եւ այսպէս ըրած է Գանձնաժողովը ալ: Հետեւեալ այս հիման վրայ խորհելով Գանձնաժողովը չէր կարող օգնել Պիլիճիկին:

Գանձնաժողովը կըսէ թէ՛ ոչ միայն Պիլիճիկի մէջ, այլ նաեւ տասնեակ գաւառներու մէջ սով է տարածուած կայ. ամէն կողմէ օգնութիւն կը խնդրեն. արդ եթէ Զէյթունի Գանձնաժողովը Պիլիճիկիներուն ալ օգնէ, այն ատեն պէտք է որ ուրիշ գաւառներուն ալ օգնէ. և եթէ ուրիշ գաւառներուն օգնէ, այն ատեն Զէյթունի բան մը չը մնար: Եւ այսքանով չը լինար: Զէյթունի համար հաւաքուած ստակը եթէ քաշխուռի հաւասարապէս ամեն տեղի համար, այն ատեն իւրաքանչիւրին աշխարհ քիչ բան բաժին կըլլայ, որ և ոչ իսկ փոքրիկ օգուտ մը կընայ ունենալ: Եւ որովհետեւ արդարութիւնն է Զէյթունի ստակին բաժին հանել Պիլիճիկին և ուրիշ գաւառներուն բաժին չը հանել, հետեւեալ հարկ է հաւասարապէս ամենուն ալ մերժել, եթէ ամենուն ալ չը պիտի տրուի:

Բայց միւս գաւառներն ինչ ընելու է: Զէյթունի հրկիզելոց Գանձնաժողովը կը պատասխանէ, թէ այդ տարբեր խնդիր է: Ատոնց համար պէտք են ուրիշ մարդիկ աշխատեն: Մեծ դուռներ հարկուոր է: Իրենք Զէյթունի համար աշխատած են, եթէ դիտարկեն որ աւելին պէտք է, աւելին համար կաշխատելին: Եւ իրօք ալ կը տեսնենք, որ ուրիշ աշխատողներ եղան, Պիլիճիկի համար մասնաւոր հանգանակութիւններ եղան, ինչպէս արդէն վարդաց գրած են: Ինչպէս կը տեսնուի Զէյթունը չը միասնէ Պիլիճիկին, ընդհակառակն:

Անգամ մը որ Զէյթունի հրկիզելոց Գանձնաժողովը ինքնուրեք պարտական կը զգար միայն Զէյթունի համար գործածել հաւաքած ստակը բեռնակաւ էր: որ դիմէր Թիֆլիսի յանձնաժողովին նորա կարծիքն առնելու համար մի քանի հանրային չէնքերու համար, որպէս են դպրոց, եկեղեցի և այլն, կարծեաց համաձայնութիւն մը հաստատելու համար: Սակայն Պոլսոյ Գանձնաժողովի կողմանէ տակաւին այս իմաստով նամակ մը չէր գրուած ի Թիֆլիս, երբ Թիֆլիսի յանձնաժողովը նամակագրէ Արիստակէս սրբազանի կողմանէ նամակ մը կը հասնի Պոլսոյ յանձնաժողովին: Ի հարկէ այդ նամակի մէջ Արիստակէս սրբազան Զէյթունի մասին կը խօսի: Ինչպէս կըսէ որ Թիֆլիսի յանձնաժողովը ու իւր սրբազան նախագահը ուրիշ գաւառներու մասին ալ խօսին, քանի որ Պոլսէն այդ մասին իրենց բնաւ բան մը չէր գրուած: Պոլսէն խնդրած են Զէյթունի համար ստակ, որք ալ խնդած էք, ինչ բանի մէջ միջաւոր է իրենցմէն սրբազան, երբ կը խօսի թէ այդ ստակը Զէյթունի մէջ ինչպէս գործածելու է: Միթէ սրբազան կարող էր գուշակել թէ գաւառական կողմերու համար ալ ստակ պէտք է:

Եւ յետոյ Արիստակէս սրբազանի նամակը սակայն պարզ է: Թելադրեալ են չը տեսայ այդ նամակն և ասան ինչպէս իմաստն ինձ հաղորդուեցաւ: Արիստակէս սրբազան կըսէ թէ Թիֆլիսի յանձնաժողովը կը կարծէ որ Պոլսոյ բարեկամ յանձնաժողովը չէր կարծէր Զէյթունի դպրոցը կառուցուած լինելու է, հետեւեալ փախած կը յայտնէ, որ Թիֆլիսի յանձնաժողովը խրկած ստակը գործածուի դպրոցի ապագայն ապահովելու և այս մասին ալ զգրոցի չէնքին վրայ ալ յիշատակութիւն մը լինի, որպէս զի Զէյթունցիք ալ յիշեն թէ հետեւ երկրի մէջ իրենց կողմը դիմելը չեն մոռցրել: Պոլսոյ Զէյթունի յանձնաժողովը այս փախուցը նկատողութեան կուսում, շատ օգտակար կը գտնէ և կործէ զարգացող յարմար: Կարգադրել խնդիրն: Ըստ այնմ ալ կը գրուի Արիստակէս սրբազանին: Դատ անկերն է, որ թէ

Թիֆլիսի յանձնաժողովին, թէ Արիստակէս սրբազանին և թէ Պոլսոյ յանձնաժողովին ընթացքը շատ ուղիղ և արդար է, հետեւեալ ընդհանուրութեան տեղի չը կայ:

Աւելացնենք սակայն որ Զէյթունի յանձնաժողովն ուրիշ վայրերու ալ օգնութիւն ըրաւ, բայց այն վայրերուն, սրբ կիլիկիոյ մէջ են: Այսպէս հետապրաւ խրկեց ի Հաճնու երկու հազար բուլղարի, և Հարպուշի (Զէյթունին մի քանի ժամ հեռու) հինգ հարիւր բուլղարի: Այդ կողմերու հայերն ալ ստակապէս կը տաւապին սովին: Զէյթունի յանձնաժողովը կարող չէր աւելի օգնութիւն մը ընել: Եւ այսքանով ալ որ ըրաւ պատրիարքարանի Գաղաքական և Կրօնական ժողովոց յատուկ հրամանացն համեմատ ըրաւ: Զէյթունի յանձնաժողովն ինքզինք ազատ չը նկատէր Զէյթունի համար հաւաքուած ստակն ուրիշներու տալ: Եւ որովհետեւ Հաճնու ու Հարպուշ կը գտնուին Կիլիկիոյ մէջ, յանձնաժողովը մինչև աստիճան մը կընայ արդարանալ օգնելով անոնց:

Այդ վարչութիւնն որոշած էր, որ Զէյթունի յանձնաժողովը ընդարձակէ իւր գործունէութիւնն և օգնէ ուրիշ սովեալ վայրերու, բայց յանձնաժողովը անհամբեր յանձնառու չեն ըլլալ, իրենց պաշտօնն աւարտել վերջ չեն ուղեր ուրիշ բան ընել և օրտակարագոյն կը համարեն որ այդ պաշտօնն ալ ուրիշներուն յանձնուի: Եւ իրացնէ միշտ մի և նոյն մարդերու վրայ ծանրանալը լաւ է:

Այսքանը բաւական է կարծեմ խնդրոյն վրայ որոշ գաղափար մը տալու համար:

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— «Արեւել» մէջ կարգում ենք հետեւեալը: «Ամեն Մկրտիչ Ս. Արեւելիսկոպոս խորհման վանայ վարդապետ վանուց փանահայրական պաշտօնէն, զոր կը վարէր երկար ժամանակէ ի վեր հրաժարական մատուցած լինելով, Պոլսի խառն ժողովը ցաօք ընդունեց Ն. Արեւելիսկոպոսի հրաժարականն և յիշեալ վանուց անհաշիւ ռուսաւարակարութիւնն առժամայն կերպիւ յանձնեց վանայ առաջնորդարանին, իւր չնորհակալութիւնն յայտնելով Ամեն. խորհման Արեւելիսկոպոսի վանուց պայծառութեան մասին մինչև ցարդ տարած խնամոցն համար:

— Բազմաթիւ տարածման տեղի մօտ գտնվող սերբիական զօրքը հաւաքուած է:

— Սօֆիայի բնակարան են, որ բողոքական կառավարութիւնը փոխ պակասութիւն է գրում:

— Վերջին ժամանակները Ֆրիդրիխ կայսրի առողջութիւնը աւելի փոփոխական կերպարանք է ստացել: Կայսրը մի և նոյն օրվայ ընթացքում մի քանի անգամ էր ինքնուրեք այնքան ստակաւորում է, որ նա ստիպված է լինում անկողին մտնել:

— Երկ-Երկրից գրում են, որ վերջին ժամանակներս այնտեղ երկու դասախօսութիւններ կարգացվեցան, որոնց նպատակն էր գէթ մի թույլ դադարի տալ հետեւ ամերիկացիներին ռուսաց զրականութեան մասին: Հակառակ դատախօսի սպասածին, հասարակութիւն շատ քիչ եկաւ դասախօսութիւնները լսելու, այնպէս որ առաջին դասախօսութեանը ներկայ էր 27 մարդ, իսկ երկրորդին՝ 50 մարդ:

— Փարիզի մի քանի փողոցներում ցոյցեր են լինում Բուլանտինի կողմնակիցների ձեռքով: Միւս կողմից հանրապետականները այս օրերս տօնեցին 1789 թվ. յեղափոխութիւնը: Այդպիսի հրապարակական տօնախմբութիւններ վճռված է կրկնել շատ անգամ:

ԻՍԱՆ ԼՈՒՐԵՐ

Այժման քաղաքական խառնաշփոթ վիճակի և Լրագիրներում տպվող միմյանց հակասող քաղաքական լուրերի առերթով դերմանական «Klad-dedatsch» ծաղրական թերթը հետեւեալ սրամտութիւն է անում:

Եթէ դուք կը կարդաք մի լրագիր, — կը յիշատակէր:

Եթէ կը կարդաք երկու լրագիր, — կը գտնէր: Եթէ կը սկսէք բոլոր լրագիրները կարդալ, — կը խելոքանաք, որովհետեւ այն ժամանակ կը հասնի, վերջապէս, որ աւելի լաւ է ոչ մէկը չը կարդալ:

Որքան ճիշդ տեղեկութիւններ ունեն մայրաքաղաքի ռուս լրագիրները Կովկասի և Անդրկովկասի

մասին, կարելի է հետեւալ օրինակներից եզրակացնել: Դրերում «НВВ» պատկերազարդ շաբաթաթերթը նկարել է կովկասեան զգեստներով, բայց բոլորովին կովկասեան տիպ չունեցող մի ինչ որ մարդուն, որ ձեռքում բռնած ունի թաւաւած երաժշտական գործիքը, — իսկ պատկերի տակ ստորագրված էր հետեւալ բացատրութիւնը: «Татаринъ играющій на зурнѣ.» (Չուրնայի վրա ածող թուրք): Երկրորդ օրինակ ներկրում «Московск. Вѣд.» լրագիրը, խօսելով քանի մի ժամանակ առաջ Բագուի նահանգական դատարանի Շամախու բաժնում դատարանի երկու անդամների մէջ դատաւարական նիստի ժամանակ պատահած անկարգութեան մասին, բացակայնում է. «Вотъ до чего доводитъ насъ судъ присяжныхъ» (Այս ուր է հասցրել մեզ երդ-ւանների դատարանը): Լրագիրը չը գիտէ թէ ոչ թէ միայն Շամախու, բայց և ամբողջ Կովկասում դեռ են չը կայ երդուեալների դատարանը: Վերջապէս կը բերենք Կովկասի մասին սխալ տեղեկութիւնների մի այլ օրինակ, բայց այս անգամ ոչ թէ մայրաքաղաքի, այլ Կովկասում հրատարակվող պայծառական ռուս «Кавказъ» լրագրի էջերից: Այդ լրագիրը, որ պէտք է ճիշդ տեղեկութիւններ ունենար երկրի մասին, և որ սխալում է մեր երկրի վերաբերմամբ տնտեսական հարցեր վճել իր առաջնորդներում, իր № 107-ի առաջնորդում, խօսելով բրինձի արտահանութեան մասին, ասում է հետեւեալը. «Рисъ культивируется и у насъ въ Закавказіи, гдѣ такъ называемый акулискій рисъ не оставляетъ желать ничего лучшаго.» Լրագիրը կարծում է որ Պարսկաստանի Ահուլ-Էստանում բրինձի տեսակը Ագուլիսիցն է դալիս....

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՄՆԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 ապրիլի: Հրատարակված է «Лѣсъ-Мѣржекій» անունով արդիւնաբերական ընկերութեան կանոնադրութիւնը: Ընկերութիւնը նպատակ ունի պահպանել և ընդարձակել Լէնին-ի գաւառի չաքարի գործարանը, Լոճի գաւառի արաղի և դաւերի գործարանները և մշակել «Լէս-Մէրժ» կալուածքի և այլ կալուածքների տնտեսութիւնը և արդիւնաբերութիւնը: Կալի-նեան և Պետրովկոմեան նահանգներում Կրամ-գուլը 1,200,000 բուրի է: Հիմնդներն են վար-չավայի գործարանատէր Ջինգեր և տիկիններ Շէլստեր, Շէլստեր և Բէտտիլեր:

ՎԻԵՆԱ, 27 ապրիլի: Վարդ կը հրատարակվի իրադէ, որով Սովետն հաստատում է Սուէզի պայմանագիրը: Բ. Դուռը հրաժարվից Սուէզի ջրանցքի գործերի վերաբերեալ միջադատյալ խորհրդին նախագահելու դիմումները, իսկ Անգլիան Թիւրքիայի իրաւունքն է համարում օգտվելու ջրանցքից զօրք տեղափոխելու և Արաբիան պաշտպանելու համար:

ԱԹԵՆԻ, 27 ապրիլի: Յունաց թագուհին ուղեւորվում է Պետերբուրգ:

ՓԱՐԻԶ, 27 ապրիլի: Գլխաւոր կենտրոնները 361 չրջաններից 206 մտնելիք պալատներում մեծամասնութիւնը պատկանում է հանրապետականներին, իսկ 16 խորհուրդներում — պահպանողականներին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 ապրիլի: Պետական խորհրդի նստաշրջանը փակվում է մայիսի 27-ին: Երդ-ւալ դատաւարների իրաւասութեան կազմակերպութեան նախագիծը յետաձգված է մինչև աշուն: Այսօր տեղի ունեցաւ կոմսուհի Տիգլինգուդէնի թագուհի, որը ֆէլդմարշալ Կուտուզովի ազգա-կանն է, և որը ֆրէյլինա էր դարձել տասն տարեկան հասակում, մնալով այդ կոչման մէջ 75 տարի: Մարմինը ամփոփեցաւ Ալէքսանդր-Նեվ-սկի վանքում: Գուրաղակաւորութեան ճանապարհի վրա, Կուտուզովի արձանի մօտ այդ կատարվեցաւ: Գուրաղակաւորութեանը և թագուհին ներկայ էին Բարձրագոյն անձինք:

ԼՕՆԴՈՆ, 28 ապրիլի: Ջինուորական միւստ-րը բացատրելով համայնքների ժողովի պատգա-մաւորութեանը իր նպատակները, Անգլիայի և յատկապէս Երդունի պաշտպանութեան համար, ասեց, որ արմուկները բաւականացուցիչ չեն, անհրաժեշտ է կազմակերպել զօրեղ պահստի զօրաբաժին, նոյնպէս և անհրաժեշտ է զօրացնել կամաւորների պատերազմական պատրաստակա-րանքը:

Եթէ կը կարդաք երկու լրագիր, — կը գտնէր: Եթէ կը սկսէք բոլոր լրագիրները կարդալ, — կը խելոքանաք, որովհետեւ այն ժամանակ կը հասնի, վերջապէս, որ աւելի լաւ է ոչ մէկը չը կարդալ:

